ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԷՐԵԲՈՒՆԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

«18» 06 2021թ.
№ 24/1-5/142922

ք. Երևան, Սասունցի Դավթի փող., հ. 87,
հեռ.՝ (+374 11) 518 304,
էլ.փոստ՝ erebouni@yerevan.am

«ԱԼԵՔՍԱՆԴՐ-Մ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ն.ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ
ք. Երևան, Մաշտոցի փող. 2. 54Ա

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ԱԼԵՔՍԱՆԴՐ-Մ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 19.02.2021 թվականին կնքված «ԵՔ–ԲՄԱՊՁԲ-21/7» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Երևանի քաղաքապետարանի և «ԱԼԵՔՍԱՆԴՐ-Մ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 19.02.2021 թվականին կնքված «ԵՔ–ԲՄԱՊՁԲ-21/7» ծածկագրով գնման պայմանագրի համաձայն Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում պետք է մատակարարվեին 12 (տասներկու) հատ հագուստ (հավաքարարի): Նշված պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն կատարողը պարտավոր էր մատակարարեր հագուստ /խալաթ/ 90% պոլիէսթեր 10% բամբակ կամ 80% պոլիէսթեր 20% բամբակ հավաքարարաների համար չափսերի 34-50: Արտաքին տեսքը/գույնը դիզայնը/ համաձայն հաստատված նմուշի պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի հագուստիչափսերը, արտադրող կազմակերպության անվանումը: Մատակարարող կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանմանը պետք է ներկայացնի նմուշները /նկարը կցվում է/: Մատակարարը մատակարարվող հագուստի չափերը պետք է նախապես համաձայնեցնի պատվիրատուի հետ: Վերոնշյալ հագուստները պետք է մատակարարեր մինչև 15.04.2021 թվականը ներառյալ:

Համաձայն վերը նշված պայմանագրի 2-րդ մասի 2.1.2 կետի բ) ենթակետի՝ չընդունել ապրանքն իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համ ապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

Նույն պայամանագրի 6.3 կետի՝ նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 15(տասնհինգ) տոկոսի չափով:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայամանգիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Նույն պայամանագրի 2.1.7.1 կետի ա) ենթակետի համաձայն՝ մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետի համաձայն՝ «Մատակարարի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ մատակարարվել են անպատշաճ որակի ապրանքներ, որոնց թերությունները չեն կարող վերացվել գնորդի համար ընդունելի ժամկետում»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԱԼԵՔՍԱՆԴՐ-Մ» ՍՊ ընկերությունն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և չի կատարել Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի 01.06.2021թ. 24/1-10/126572 գրության պահանջը, հատնաբար Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում «ԱԼԵՔՍԱՆԴՐ-Մ» ՍՊ ընկերության հետ կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Տեղեկացնում ենք, Ձեզ, որ Պայմանագրի 6.3 կետով նախատեսված պայմաններով քաղաքապետարանի 900015211429 հաշվեհամարին պետք է փոխանցվի 12.150 ՀՀ դրամ տուգանք /տուգանքի հաշվարկ՝ /81000 X 15% = 12 150 ՀՀ դրամ/ և նշված տուգանքի գանձման համար՝ օրենքով սահմանված կարգով գրություն կներկայացվի <<Ինեկոբանկ>> ՓԲԸ՝ տուգանքի գումարը Երևանի քաղաքապետարանի 900015211429 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ընկերությունը, <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, ընկերության տվյալներն օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Կատ.՝ Մ. Մելքոնյան
011 518341